
28.02.2013թ.

**«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ
ՈՐՊԵՍ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ
ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ
ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն Ընթացակարգը սահմանում է «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ՝ որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի կողմից իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին կարգավորվող շուկայում կորպորատիվ արժեթղթերով (այսուհետ՝ արժեթուղթ) գործարքների կնքման նպատակով արժեթղթերի առևտրային արգելադրման, առևտրային արգելադրման դադարեցման, ինչպես նաև դրամական միջոցների դեպոնացման գործընթացը և մշակված է ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ենթօրենսդրական ակտերի, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության Կանոնների»(այսուհետ՝ Կանոններ), ինչպես նաև «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ «Բրոքերային գործառնությունների իրականացման Կանոնների» համաձայն:

1.2. Սույն Ընթացակարգում օգտագործված հասկացություններն ունեն Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության Կանոններով» և «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ «Բրոքերային գործառնությունների իրականացման Կանոններով» սահմանված նշանակությունները:

Գլուխ2. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին կարգավորվող շուկայում կորպորատիվ արժեթղթերով (այսուհետ՝ արժեթուղթ) գործարքների կնքման նպատակով Հաճախորդից պարվերների ընդունման և կատարման Ընթացակարգը.

2.1. «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ (այսուհետ՝ նաև Ընկերություն) հանդիսանալով արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի (այսուհետ՝ նաև Համակարգ) Անդամ կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակով (այսուհետ՝ Համակարգի Անդամ), իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին կարգավորվող շուկայում արժեթղթերով առք ու վաճառքի գործարքների կնքման նպատակով արժեթղթերի առևտրային արգելադրման, առևտրային արգելադրման դադարեցման, ինչպես նաև դրամական միջոցների դեպոնացման գործառնությունները իրականացնում է՝ համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության Կանոնների» (այսուհետ՝ Կանոնների), Ընկերության «Բրոքերային գործառնությունների իրականացման Կանոնների», Ընկերության Սակագնային Սանդղակի (այդ թվում նաև դրա «Հաշվարկման Կարգի») և սույն Ընթացակարգի:

2.2. Մինչև Հաճախորդի ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը Համակարգի Անդամը պարտավոր է իր Հաճախորդին ծանոթացնել Կենտրոնական դեպոզիտարիայի Կանոններին, Ընկերության՝ «Բրոքերային ծառայությունների մատուցման Կանոններին», սույն Ընթացակարգին, Ընկերության Սակագնային Սանդղակին (այդ թվում նաև դրա «Հաշվարկման Կարգին»), որի հիման վրա էլ հաշվարկվում է Հաճախորդին մատուցվող ծառայության գինը:

2.3. Համակարգի Անդամն իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների իրականացման համար (հետագայում՝ մատուցվող ծառայություն) կնքում է երկկողմանի պայմանագրեր՝ համաձայն Ընկերության ներքին կանոնակարգերի և սակագների: Հաճախորդների հետ կնքվող Պայմանագրի ժամկետների վերաբերյալ սահմանափակումներ չկան և կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագիրը կարող է հաճախորդի կողմից միակողմանի լուծվել՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու և պայմանագրային պարտավորությունները

նախապես կատարելու պայմանով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Ընկերությունը պարտավոր է Հաճախորդին փոխանցել վերջինիս դրամական միջոցները, իսկ առևտրային հիմքով արգելադրված արժեթղթերի դեպքում իրականացնել արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցում:

2.4. Հաճախորդի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթեր

2.4.1. Հաճախորդի՝ ֆիզիկական անձ լինելու դեպքում ներկայացվում է՝

- ✓ անձնագրի պատճենը (ներկայացնելով բնօրինակը համեմատելու համար),
- ✓ անհրաժեշտության դեպքում՝ սոցիալական քարտը և այլ փաստաթղթեր ու տեղեկություններ:

2.4.2. Հաճախորդի՝ իրավաբանական անձ լինելու դեպքում ներկայացվում է

- ✓ կանոնադրության, պետական ռեգիստրի վկայականի պատճենները (ներկայացնելով բնօրինակները, համեմատելու համար), իսկ անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր ու տեղեկություններ,
- ✓ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցիչների ստորագրության նմուշները (նոտարական վավերացմամբ),
- ✓ իրավաբանական անձի անունից հանձնարարականները ներկայացնելու անձի լիազորությունը հաստատող փաստաթուղթը:

2.4.3. Հաճախորդի կողմից արժեթղթերի վաճառքի պատվեր ներկայացնելու դեպքում ներկայացվում է նաև Հաճախորդի՝ իր սեփականության իրավունքը հավաստող, արժեթղթերի հաշվից քաղվածքը: Քաղվածքը Հաճախորդը ստանում է իր արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի կողմից:

2.5. Նույնատիպ գործարքներ կատարելիս հաճախորդի հետ կնքվում է ծառայությունների մատուցման գլխավոր պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ յուրաքանչյուր գործարքի կատարման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից Համակարգի Անդամին ներկայացված Պատվերը (Հայտը), որը ներառում է տվյալ գործարքի վավերապայմանները: Պատվերը(Հայտը), ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է փոստով (էլ.փոստով), ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն (առանձին դեպքերում հաճախորդի համար կարող է սահմանվել պատվեր (հայտ) ներկայացնելու այլ եղանակ): Պատվերում (հայտում) ներառվող տեղեկությունների փոփոխության դեպքում Հաճախորդը պարտավոր է

մինչև Ընկերության կողմից տվյալ պատվերով գործարքի կնքումը նոր, փոփոխված տեղեկություններ պարունակող Պատվերը (հայտը) ներկայացնել Ընկերություն:

2.6. Համակարգի Անդամի հաճախորդների կողմից ներկայացված պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության սեփական հայտերի նկատմամբ:

2.7. Կնքված գործարքների փոխադարձ հաշվարկները իրականացվում են պայմանագրում և/կամ Պատվերում նշված ժամկետում փոխանցումով բանկային հաշիվներին:

2.8. Կարգավորվող շուկայում արժեթղթերի վաճառքի պատվերի իրականացման ընթացակարգը

2.8.1. Հաճախորդը կարգավորվող շուկայում արժեթղթերի վաճառքի Պատվերի ներկայացման շրջանակներում պարտավորվում է իր արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին ներկայացնել հանձնարարական, որի համաձայն Հաշվի Օպերատորը Կենտրոնական դեպոզիտարիայի և իր կանոնների համաձայն՝ պետք է Համակարգի Անդամին տրամադրի Հաճախորդի արժեթղթերի հաշվին հասանելիության:

2.8.2. Եթե Հաճախորդը կարգավորվող շուկայում արժեթղթերի վաճառքի Պատվերը տալու պահին արդեն իսկ իր արժեթղթերի հաշվին հասանելիության տրամադրման հանձնարարական է ներկայացրել իր արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորին, ապա Պատվերում (հայտում) կատարվում է նշում այդ մասին:

2.8.3. Համակարգի Անդամը, ստանալով արժեթղթերի հաշվին հասանելիություն, Կենտրոնական դեպոզիտարիայի ծրագրային համակարգում իրականացնում է արժեթղթերի առևտրային արգելադրում:

2.8.4. Պատվերի պայմաններից կախված՝ կարող է իրականացնել նաև առևտրային արգելադրման դադարեցում՝ համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների:

2.8.5. Առքի/վաճառքի պատվերի տրման ժամից կախված՝ սահմանվում է պատվերի կատարման օրը և ժամը, որը հստակ պետք է սահմանված լինի պատվերում:

2.8.6. Համակարգի Անդամը Հաճախորդի առքի/վաճառքի պատվերի պատշաճ իրականացումից հետո այդ մասին պատշաճ ծանուցում է Հաճախորդին, որը իր արժեթղթերի հաշվից քաղվածքը ստանում է իր արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի կողմից:

2.8.7. Համակարգի Անդամը Հաճախորդի առքի/վաճառքի պատվերի պատշաճ իրականացումից հետո իր իրավասու հաշվից գանձում է ծառայության գումարը Պայմանագրով սահմանված ժամկետում և մնացած գումարը փոխանցում է Հաճախորդի հաշվարկային հաշվին:

2.8.8. Հաճախորդը պարտավորվում է պայմանագրով սահմանված ժամկետում վճարել մատուցված ծառայության գումարը, որի մեջ արդեն ներառված է Ընկերության Սակագինը: